**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 2**
**05.12.2014 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ**
**ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ**
**N «ԲԸՀԱՇՁԲ-14/11» ՊԱՅՄԱՆԱԳՐԻ**

ք. Երևան «25» մայիսի 2015 թ.

ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, ի դեմս Հիմնարկի տնօրեն Հ. Սարգսյանի, որը գործում է Հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և **«Բազալտշին» ԱԿ-ն,** ի դեմս Կոոպերատիվի նախագահ Լ.Մարտիրոսյանի, որը գործում է Կոոպերատիվի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական և գնումների մասին օրենսդրությամբ, ինչպես նաև հիմք ընդունելով Կողմերի միջև 2014 թվականի դեկտեմբերի 5-ին կնքված **ՀՀ Գեղարքունիքի մարզի ք.Գավառի թատրոնի շենքի կառուցման ավարտման աշխատանքների** N «ԲԸՀԱՇՁԲ-14/11» պետական գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.4 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1. Կողմերը որոշեցին.

1.1 Պայմանագրով նախատեսված (2014թ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում) աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգել մինչև 2015 թվականի հուլիսի 15-ը՝ Պայմանագրի 1.3 կետով սահմանված «2015 թվականի մայիսի 30-ը» բառերը փոխարինելով «2015 թվականի հուլիսի 15-ը» բառերով:

1.2 Պայմանագրի թիվ 2 հավելվածով սահմանված օրացուցային գրաֆիկը փոխարինել սույն Համաձայնագրի թիվ 1 հավելվածով սահմանված օրացուցային գրաֆիկով:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից, գործում է մինչև Կողմերի կողմից սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը և կազմում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն Համաձայնագրում կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3. Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի թիվ 1 հավելվածը հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ»ՊՀ | «Բազալտշին» ԱԿ |
| ք.Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 | ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գեղարքունիք |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Վարդանանց մ/ճ |
| Հ/Հ 900011474336 | Հ/Հ 1150000278680100 |
| ՀՎՀՀ 02553861 | ՀՎՀՀ 08400345 |
| Տնօրեն՝ Հ. Սարգսյան ____________ (ստորագրություն) Կ.Տ | Նախագահ՝ Լ.Մարտիրոսյան ____________ (ստորագրություն) Կ.Տ |

Հավելված թիվ 1
«05» դեկտեմբերի 2014թ.
կնքված աշխատանքների կատարման
թիվ «ԲԸՀԱՇՁԲ-14/11» գնման պայմանագրի
«25» մայիսի 2015թ. կնքված
թիվ 2 համաձայնագրի

## ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ Ք.ԳԱՎԱՌԻ ԹԱՏՐՈՆԻ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Ծավալը ( ՀՀ դրամ) | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|---|
| | | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | Հողային աշխատանքներ | 11600556 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից | 25.04.2015թ |
| 2 | Հիմքեր | 45138720 | 20.02.2015թ | 29.04.2015թ. |
| 3 | Կմախք և պատեր | 28077984 | 28.02.2015թ | 15.07.2015թ. |
| 4 | Ծածկեր | 9820800 | 01.03.2015թ | 15.07.2015թ |
| 5 | Աստիճանավանդակներ | 2889744 | 01.03.2015թ | 15.07.2015թ |
| 6 | Միջնորմներ | 2342208 | 15.02.2015թ | 15.07.2015թ |
| 7 | Առկա հատվածի քանդման աշխատանքներ | 17530630 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից | 30.04.2015թ. |
| 8 | Առկա հատվածի ե/բետոնյա աշխատանքներ | 5267460 | Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից | 15.07.2015թ. |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | **122 668 102** | **Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից** | **15.07.2015թ.** |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ԾԻԳ»ՊՀ
ք.Երևան, Հանրապետության հրապարակ,
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011474336
ՀՎՀՀ 02553861

Տնօրեն՝
Հ. Մարգսյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ

**Կ Ա Պ Ա Լ Ա Ռ Ո Ւ**

«Բազալտշին» ԱԿ
ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ.Գեղարքունիք
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ Վարդանանց մ/ճ
Հ/Հ 1150000278680100
ՀՎՀՀ 08400345

Նախագահ՝
Լ.Մարտիրոսյան ____________
(ստորագրություն)
Կ.Տ